

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«----» ----- 2017թ.

N \_\_\_-Ն

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի  
N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 24-ի հ. 01/82-6/1093-17 գրությունը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի մասին» N 637-Ն որոշմամբ հաստատված.

- 1) եկամուտների գումարն ավելացնել 331,831.2 հազար դրամով,
- 2) ծախսերի գումարն ավելացնել 1,174,041.5 հազար դրամով,
- 3) դեֆիցիտի (պակասուրդի) գումարը նվազեցնել 842,210.3 հազար դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի մասին» N 637-Ն որոշմամբ հաստատված NN 1-7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-7 հավելվածների:

3. Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի մասին» N 637-Ն որոշման 2-րդ կետի «4,220,991.0 հազար դրամ» բառերը փոխարինել «6,410,852.5 հազար դրամ» բառերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 637-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեով ՀՀ պետական բյուջեից ստացվելիք գումարները ծրագրվել էին ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշներով, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի (ՀՀ ԱԺ-ի կողմից հաստատված) և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման համաձայն՝ պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների գումարներում, ըստ ծրագրերի, կատարվել են ճշգրտումներ և փոփոխություններ, որի արդյունքում ընդհանուր գումարն ավելացել է 331,667.7 հազար դրամով, այդ թվում՝
  - փոփոխություններ են կատարվել տարրական ընդհանուր կրթության, հիմնական ընդհանուր կրթության և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության՝ «Հանրակրթական ուսուցում», «Հատուկ կրթություն», «Ներառական կրթություն» և «Երեկոյան կրթություն» ծրագրերում, որի արդյունքում նշված ծրագրերի հանրագումարային թիվը նվազել է 219,788.3 հազար դրամով,
  - «Նախադպրոցական կրթություն» ծրագրի գումարները ավելացել են 2,349.1 հազար դրամով,
  - որպես այլ ընթացիկ դրամաշնորհ Երևան քաղաքի դպրոցներին սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովելու նպատակով նախատեսված գումարները նվազեցվել են 13.2 հազար դրամով,
  - որպես ընթացիկ դրամաշնորհներ Երևան քաղաքի դպրոցների՝ ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին

հավելավճարների տրամադրման գումարներն ավելացել են 1,111.1 հազար դրամով,

- վարկային և դրամաշնորհային ծրագրերի ընդհանուր գումարը ավելացել է 559,307.8 հազար դրամով,
- Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման համար նախատեսված սուբսիդիայի գումարը նվազեցվել է 9,937.3 հազար դրամով,
- քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման համար հատկացվող գումարները նվազեցվել են 88.2 հազար դրամով,
- սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման համար հատկացվող գումարները նվազեցվել են 1,273.3 հազար դրամով:

Միաժամանակ ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 24-ի հ. 01/82-6/1093-17 գրությամբ 1,882,274,9 հազար դրամի չափով միջծրագրային վերաբաշխում է կատարվել Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի և Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի միջև:

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման համաձայն՝ Երևան համայնքին հատկացվելիք սուբվենցիայի գումարներում ևս, ըստ ծրագրերի, կատարվել են ճշգրտումներ և փոփոխություններ, ինչի արդյունքում հատկացվելիք սուբվենցիայի ընդհանուր գումարն ավելացել է 163,5 հազար դրամով:

Նախագծով նախատեսվում է ՀՀ 2017 թվականի պետական բյուջեում կատարված վերը նշված բոլոր փոփոխություններն արտացոլել Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեում:

- Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեով համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվել էր 200,000.0 հազար դրամ, սակայն այն փաստացի կազմել է 1,415,210.3 հազար դրամ: Հաշվի առնելով փաստացի կատարողականի արդյունքները՝ սույն որոշման նախագծով նախատեսվում է ճշգրտել տարեսկզբի ազատ մնացորդի գումարը 1,215,210.3 հազար դրամով, ինչպես

նան, հաշվի առնելով աղբահանության ու սանիտարական մաքրման ծրագրով առաջացած 53,000.0 հազար դրամի խնայողությունները, դրանք ուղղել հետևյալ ծրագրերի իրականացմանը.

- Նախագծով առաջարկվում է «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրով նախատեսված գումարներն ավելացնել 3,194,8 հազար դրամով, որից՝ 1,150.0 հազար դրամը Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի շախմատի դպրոցի և 2,044.8 հազար դրամը Էրեբունի վարչական շրջանի սպորտ-դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով:
- Նախագծով առաջարկվում է նաև 12,500.0 հազար դրամով ավելացնել «Հասարակական կազմակերպություններին աջակցություն» ծրագրով նախատեսված գումարները՝ դրանք ուղղելով աուտիզմով հիվանդ անձնաց աջակցությանը:
- Նախագծով առաջարկվում է 11,000.0 հազար դրամ ուղղել ՄԱԿ-ի զարգացման ծրագրով իրականացվող «Քաղաքային կանաչ լուսավորություն» Ծրագրի շրջանակներում համատեղ ստորագրած Հուշագրով նախատեսված Արգիշտի 1 հասցեում գտնվող Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի և նույն շենքի հետ մեկ ամբողջականություն կազմող Երևան քաղաքի պատմության թանգարանի մասնաշենքի ներքին լուսավորության արդիականացման և էներգախնայող լուսատուների տեղադրման աշխատանքների համաֆինանսավորմանը:
- Նախագծով առաջարկվում է նաև «Կանաչ տարածքների հիմնում և պահպանում» ծրագրով նախատեսված գումարներն ավելացնել 22,000.0 հազար դրամով, որից 14,000.0 հազար դրամը, որպես աջակցություն, «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ին առկա պարտքերի մարման նպատակով, իսկ 8,000.0 հազար դրամը «Շենգավիթ-կանաչապատում» ՓԲԸ-ին 2016 թվականի տարեվերջին շահագործման հանձնված Արշակունյաց պողոտա, Շիրակի փողոց Արտաշատի խճուղի ճանապարհահատվածում նոր ստեղծված շուրջ 2 հա կանաչ տարածքների խնամքի և պահպանման լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման համար:
- Նախագծով առաջարկվում է 250,000.0 հազար դրամ ուղղել նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման և 70,000.0

հազար դրամ վերանորոգված մանկապարտեզների համար գույքի ձեռք բերման ծրագրերին:

- Նախագծով նախատեսվում է 2016 թվականին մեկնարկած Երևանի կենդանաբանական այգու հիմնանորոգման աշխատանքների շարունակականությունն ապահովելու նպատակով ծրագրով նախատեսված գումարներից 2016 թվականին չիրացված մասի գումարի չափին համարժեք 136,015.5 հազար դրամ ավելացնել ծրագրին:
- Նախագծով առաջարկվում է 402,000.0 հազար դրամով ավելացնել «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ» ծրագիրը՝ 2016 թվականին նախատեսված և չիրացված գումարի չափով:
- Նախագծով նախատեսվում է նաև 245,000.0 հազար դրամով ավելացնել արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգման և վերանորոգման և 10,000.0 հազար դրամով երաժշտական դպրոցների համար գույքի ձեռք բերման համար նախատեսված գումարները:
- Նախագծով առաջարկվում է 16,500.0 հազար դրամով ավելացնել սարքավորումների ձեռք բերման և դրանց ծրագրային ապահովման համար նախատեսված գումարները՝ քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության և հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատանքներն առավել վերահսկելի, թափանցիկ և արդյունավետ դարձնելու նպատակով:
- Նախագծով նախատեսվում է նաև 90,000.0 հազար դրամով ավելացնել «Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում» ծրագրի գումարները՝ Ստեփանակերտի այգու կառուցմանն աջակցելու նպատակով:
  - ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 637-Ն որոշումներին համաձայն կնքված պայմանագրերի շրջանակում նախագծով նախատեսվում են նաև համապատասխան փոփոխություններ կատարել ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների ծրագրով նախատեսված գումարներում:
  - Հիմք ընդունելով նշված փոփոխությունները և վերաբաշխումները՝ բյուջեի վարչական և ֆոնդային մասերը հավասարակշռելու նպատակով նախագծով

առաջարկվում է վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նվազեցնել 484,694.8 հազար դրամով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 637-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ N 1**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 637-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ N 2

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 637-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2017 թվականի բյուջեի եկամուտները ավելանում են 331,831.2 հազար դրամով, ծախսերը՝ 1,174,041.5 հազար դրամով, դեֆիցիտը նվազում է 842,210.3 հազար դրամով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**



**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1  
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տարի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	(հազար դրամներով)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
<b>1000</b>	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>		<b>331,831.2</b>	<b>331,831.2</b>	<b>(484,694.8)</b>
	այդ թվում՝				
1200	<b>2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՍԱՇՆՈՐՀՆԵՐ</b>	<b>7300</b>	<b>163.5</b>	<b>163.5</b>	<b>-</b>
	այդ թվում՝				
1250	<b>2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից</b>	<b>7331</b>	<b>163.5</b>	<b>163.5</b>	<b>-</b>
	որից				
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		163.5	163.5	-
<b>1300</b>	<b>3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>	<b>7400</b>	<b>331,667.7</b>	<b>331,667.7</b>	<b>(484,694.8)</b>
	այդ թվում՝				
<b>1340</b>	<b>3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից</b>	<b>7421</b>	<b>331,667.7</b>	<b>331,667.7</b>	<b>-</b>
	այդ թվում՝				
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		331,667.7	331,667.7	
<b>1390</b>	<b>3.9 Այլ եկամուտներ</b>	<b>7451</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>(484,694.8)</b>
	այդ թվում՝				
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		-	-	(484,694.8)

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2  
ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>1,174,041.5</b>	<b>331,831.2</b>	<b>357,515.5</b>
2100	01	0	0	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>26,074.9</b>	<b>9,574.9</b>	<b>16,500.0</b>
				այդ թվում՝			
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>	<b>26,163.1</b>	<b>9,663.1</b>	<b>16,500.0</b>
				որից՝			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	26,163.1	9,663.1	16,500.0
2130	01	3	0	<b>Ընդհանուր բնույթի ծառայություններ</b>	<b>(88.2)</b>	<b>(88.2)</b>	<b>-</b>
				որից՝			
2131	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	(88.2)	(88.2)	-
2400	04	0	0	<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>(1,725,993.1)</b>	<b>(1,725,993.1)</b>	<b>-</b>
				այդ թվում՝			
2450	04	5	0	<b>Տրանսպորտ</b>	<b>(1,725,993.1)</b>	<b>(1,725,993.1)</b>	<b>-</b>
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	(1,720,434.4)	(1,720,434.4)	-
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	(5,558.7)	(5,558.7)	-
2500	05	0	0	<b>ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>(25,424.6)</b>	<b>(25,424.6)</b>	<b>-</b>
				այդ թվում՝			
2510	05	1	0	<b>Աղբահանում</b>	<b>(47,424.6)</b>	<b>(47,424.6)</b>	<b>-</b>
				որից՝			
2511	05	1	1	Աղբահանում	(47,424.6)	(47,424.6)	-
2560	05	6	0	<b>Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>	<b>22,000.0</b>	<b>22,000.0</b>	<b>-</b>
				որից՝			
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	22,000.0	22,000.0	-
2600	06	0	0	<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</b>	<b>108,713.5</b>	<b>108,713.5</b>	<b>-</b>
				այդ թվում՝			
2630	06	3	0	<b>Ջրամատակարարում</b>	<b>107,149.6</b>	<b>107,149.6</b>	<b>-</b>
				որից՝			
2631	06	3	1	Ջրամատակարարում	107,149.6	107,149.6	-
2640	06	4	0	<b>Փողոցների լուսավորում</b>	<b>1,563.9</b>	<b>1,563.9</b>	<b>-</b>
				որից՝			
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	1,563.9	1,563.9	-

Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2800	08	0	0	<b>ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ</b>	<b>227,494.3</b>	<b>201,478.8</b>	<b>26,015.5</b>
				այդ թվում՝			
2810	08	1	0	<b>Հանգստի և սպորտի ծառայություններ</b>	<b>90,000.0</b>	<b>200,000.0</b>	<b>(110,000.0)</b>
				որից՝			
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	90,000.0	200,000.0	(110,000.0)
2820	08	2	0	<b>Մշակութային ծառայություններ</b>	<b>137,494.3</b>	<b>1,478.8</b>	<b>136,015.5</b>
				որից՝			
2821	08	2	2	Թանգարաններ և ցուցասրահներ	348.8	348.8	-
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	135,951.8	(63.7)	136,015.5
2825	08	2	5	Արվեստ	1,193.7	1,193.7	-
2900	09	0	0	<b>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>	<b>362,088.3</b>	<b>47,088.3</b>	<b>315,000.0</b>
				այդ թվում՝			
2910	09	1	0	<b>Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն</b>	<b>(56,719.7)</b>	<b>(126,719.7)</b>	<b>70,000.0</b>
				որից՝			
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	72,349.1	2,349.1	70,000.0
2911	09	1	2	Տարրական ընդհանուր կրթություն	(129,068.8)	(129,068.8)	-
2920	09	2	0	<b>Միջնակարգ ընդհանուր կրթություն</b>	<b>(90,719.5)</b>	<b>(90,719.5)</b>	<b>-</b>
				որից՝			
2921	09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	(77,424.7)	(77,424.7)	-
2922	09	2	2	Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն	(13,294.8)	(13,294.8)	-
2950	09	5	0	<b>Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն</b>	<b>258,429.6</b>	<b>13,429.6</b>	<b>245,000.0</b>
				որից՝			
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	258,429.6	13,429.6	245,000.0
2960	09	6	0	<b>Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ</b>	<b>251,097.9</b>	<b>251,097.9</b>	<b>-</b>
				որից՝			
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	251,097.9	251,097.9	-
3000	10	0	0	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>11,226.7</b>	<b>11,226.7</b>	<b>-</b>
				այդ թվում՝			
3070	10	7	0	<b>Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)</b>	<b>12,500.0</b>	<b>12,500.0</b>	<b>-</b>
				որից՝			
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	12,500.0	12,500.0	-
3090	10	9	0	<b>Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>	<b>(1,273.3)</b>	<b>(1,273.3)</b>	<b>-</b>
				որից՝			
3091	10	9	1	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	(1,273.3)	(1,273.3)	-
3100	11	0	0	<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԳԱՄՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ</b>	<b>2,189,861.5</b>	<b>1,705,166.7</b>	<b>-</b>
				այդ թվում՝			
3110	11	1	0	<b>ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ</b>	<b>2,189,861.5</b>	<b>1,705,166.7</b>	<b>-</b>
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	2,189,861.5	1,705,166.7	-

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3  
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>		<b>1,174,041.5</b>	<b>331,831.2</b>	<b>357,515.5</b>
	այդ թվում՝				
4050	<b>Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝</b>	x	<b>816,526.0</b>	<b>331,831.2</b>	-
	այդ թվում՝				
4100	<b>1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ</b>	x	<b>129.4</b>	<b>129.4</b>	-
	այդ թվում՝				
4110	<b>ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՉԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ</b>	x	129.4	129.4	-
	որից՝				
4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	129.4	129.4	-
4200	<b>1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՉԵՈՒՔ ԲԵՐՈՒՄ</b>	x	<b>(46,256.1)</b>	<b>(46,256.1)</b>	-
	այդ թվում՝				
4210	<b>ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ</b>	x	(46,330.5)	(46,330.5)	-
	որից՝				
4212	-Էներգետիկ ծառայություններ	4212	(360.9)	(360.9)	-
4213	-Կոմունալ ծառայություններ	4213	(45,020.0)	(45,020.0)	-
4214	-Կապի ծառայություններ	4214	(949.6)	(949.6)	-
4230	<b>ՊԱՅՄԱՆԱԳՐԱՑԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵՈՒՔ ԲԵՐՈՒՄ</b>	x	207.3	207.3	-
	որից՝				
4231	-Վարչական ծառայություններ	4231	(27.5)	(27.5)	-
4238	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	234.8	234.8	-
4250	<b>ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (Ծառայություններ և նյութեր)</b>	x	72.1	72.1	-
	որից՝				
4252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	72.1	72.1	-
4260	<b>ՆՅՈՒԹԵՐ</b>	x	(205.0)	(205.0)	-
	որից՝				
4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	226.9	226.9	-
4264	-Տրանսպորտային նյութեր	4264	(211.0)	(211.0)	-
4267	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	(220.9)	(220.9)	-
4400	<b>1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ</b>	x	<b>(222,916.1)</b>	<b>(222,916.1)</b>	-
	այդ թվում՝				

Տարի Տարի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4410	<b>ՍՈՒՔՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ</b>	x	(222,916.1)	(222,916.1)	-
	որից՝				
4411	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(222,916.1)	(222,916.1)	-
4500	<b>1.5 ԴՐԱՍԱԸՆՈՐՀՆԵՐ</b>	x	<b>12,097.9</b>	<b>12,097.9</b>	-
	այդ թվում՝				
4530	<b>ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՍԱԸՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԳԱԿՆԵՐԻՆ</b>	x	12,097.9	12,097.9	-
	որից՝				
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	1,111.1	1,111.1	-
4533	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	10,986.8	10,986.8	-
4600	<b>1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ</b>	x	<b>402,000.0</b>	<b>402,000.0</b>	-
	այդ թվում՝				
4630	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՍԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՔ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)</b>	x	402,000.0	402,000.0	-
	որից՝				
4634	-Այլ նպաստներ բյուջեից	4729	402,000.0	402,000.0	-
4700	<b>1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>671,470.9</b>	<b>186,776.1</b>	-
	այդ թվում՝				
4710	<b>ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ</b>	x	486,500.0	486,500.0	-
	որից՝				
4712	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	486,500.0	486,500.0	-
4760	<b>ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>(2,004,890.6)</b>	<b>(2,004,890.6)</b>	-
	որից՝				
4761	-Այլ ծախսեր	4861	(2,004,890.6)	(2,004,890.6)	-
4770	<b>ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	x	<b>2,189,861.5</b>	<b>1,705,166.7</b>	-
	որից՝				
4771	<b>-Պահուստային միջոցներ</b>	4891	2,189,861.5	2,189,861.5	-
4772	այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	-	(484,694.8)	-
5000	<b>Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>357,515.5</b>	-	<b>357,515.5</b>
	այդ թվում՝				
5100	<b>1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	x	<b>357,515.5</b>	-	<b>357,515.5</b>
	այդ թվում՝				
5110	<b>ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	x	271,015.5	-	271,015.5
	որից՝				
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	(110,000.0)	-	(110,000.0)
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	381,015.5	-	381,015.5

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
5120	<b>ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ</b>	x	86,500.0	-	86,500.0
	որից՝				
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	86,500.0	-	86,500.0

Հավելված N 4  
 Երևան քաղաքի ավագանու  
 2017 թվականի \_\_\_\_\_-ի  
 N \_\_\_\_\_ - Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 4  
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*(հազար դրամներով)*

Տողի NN		Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
			վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՍԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)	(842,210.3)	(0.0)	(842,210.3)

Հավելված N 5  
 Երևան քաղաքի ավագանու  
 2017 թվականի \_\_\_\_\_-ի  
 N \_\_\_\_\_ - Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5  
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
8010	<b>ԸՆԴԱՍԵՆԸ՝</b>		<b>842,210.3</b>	-	<b>842,210.3</b>
	այդ թվում՝				
8100	<b>Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ</b>		842,210.3	-	842,210.3
	այդ թվում՝				
8160	<b>2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ</b>		842,210.3	-	842,210.3
	այդ թվում՝				
8161	<b>2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն</b>		(373,000.0)	-	(373,000.0)
	որից՝				
8164	- բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում	6213	(373,000.0)	-	(373,000.0)
8190	<b>2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝</b>		<b>1,215,210.3</b>	-	<b>1,215,210.3</b>
	այդ թվում՝				
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ	9320	1,061,744.7	1,061,744.7	-
	որից՝				
8193	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս		1,061,744.7	1,061,744.7	-
8194	2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ	9330	1,215,210.3	-	1,215,210.3
	որից՝				
8195	- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի		153,465.6	-	153,465.6
8196	- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը		1,061,744.7	-	1,061,744.7



**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ  
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>		<b>1,174,041.5</b>	<b>331,831.2</b>	<b>357,515.5</b>
2100	01	0	0	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>26,074.9</b>	<b>9,574.9</b>	<b>16,500.0</b>
				այդ թվում՝				
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>		<b>26,163.1</b>	<b>9,663.1</b>	<b>16,500.0</b>
				որից՝				
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում		26,163.1	9,663.1	16,500.0
				այդ թվում՝				
				<b>1. Կառավարման մարմնի պահպանում</b>		<b>26,163.1</b>	<b>9,663.1</b>	<b>16,500.0</b>
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	11,000.0	11,000.0	-
				-Այլ ծախսեր	4861	(1,336.9)	(1,336.9)	-
				-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	16,500.0	-	16,500.0
2130	01	3	0	<b>Ընդհանուր բնույթի ծառայություններ</b>		<b>(88.2)</b>	<b>(88.2)</b>	<b>-</b>
				որից՝				
2133	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ		(88.2)	(88.2)	-
				այդ թվում՝				
				<b>1. Քաղաքացիական կազմության ակտիվների գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>(88.2)</b>	<b>(88.2)</b>	<b>-</b>
				-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	796.4	796.4	-
				-Էներգետիկ ծառայություններ	4212	10.6	10.6	-
				-Կոմունալ ծառայություններ	4213	(15.0)	(15.0)	-
				-Կապի ծառայություններ	4214	(740.0)	(740.0)	-
				-Վարչական ծառայություններ	4231	(27.5)	(27.5)	-
				-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	(10.9)	(10.9)	-
				-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	(51.8)	(51.8)	-
				-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	(50.0)	(50.0)	-
2400	04	0	0	<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>(1,725,993.1)</b>	<b>(1,725,993.1)</b>	<b>-</b>
				այդ թվում՝				
2450	04	5	0	<b>Տրանսպորտ</b>		<b>(1,725,993.1)</b>	<b>(1,725,993.1)</b>	<b>-</b>
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		(1,720,434.4)	(1,720,434.4)	-
				այդ թվում՝				
				<b>10. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն</b>		<b>(373,000.0)</b>	<b>(373,000.0)</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	(373,000.0)	(373,000.0)	-
				<b>14. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրագրման միջոցառումներ</b>		<b>402,000.0</b>	<b>402,000.0</b>	<b>-</b>
				-Այլ նպաստներ բյուջեից	4729	402,000.0	402,000.0	-
				<b>15. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>(1,749,434.4)</b>	<b>(1,749,434.4)</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	(1,749,434.4)	(1,749,434.4)	-
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ		(5,558.7)	(5,558.7)	-
				այդ թվում՝				
				<b>2. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>(9,937.3)</b>	<b>(9,937.3)</b>	<b>-</b>

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոսիված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(9,937.3)	(9,937.3)	-
				<b>3. Վերգտնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն</b>		<b>(213.2)</b>	<b>(213.2)</b>	-
				-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(213.2)	(213.2)	-
				<b>4. Վերակառուցման և զարգացման էկոլոգիական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>365.6</b>	<b>365.6</b>	-
				-Այլ ծախսեր	4861	365.6	365.6	-
				<b>5. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>1,972.9</b>	<b>1,972.9</b>	-
				-Այլ ծախսեր	4861	1,972.9	1,972.9	-
				<b>6. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>1,762.5</b>	<b>1,762.5</b>	-
				-Այլ ծախսեր	4861	1,762.5	1,762.5	-
				<b>7. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր</b>		<b>356.8</b>	<b>356.8</b>	-
				-Այլ ծախսեր	4861	356.8	356.8	-
				<b>8. Վերակառուցման և զարգացման էկոլոգիական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր</b>		<b>67.0</b>	<b>67.0</b>	-
				-Այլ ծախսեր	4861	67.0	67.0	-
				<b>9. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր</b>		<b>67.0</b>	<b>67.0</b>	-
				-Այլ ծախսեր	4861	67.0	67.0	-
2500	05	0	0	<b>ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		<b>(25,424.6)</b>	<b>(25,424.6)</b>	-
				այդ թվում՝				
2510	05	1	0	<b>Աղբահանում</b>		<b>(47,424.6)</b>	<b>(47,424.6)</b>	-
				որից՝				
2511	05	1	1	Աղբահանում		(47,424.6)	(47,424.6)	-
				այդ թվում՝				
				<b>1. Աղբահանություն և սանիտարական մաքրում</b>		<b>(53,000.0)</b>	<b>(53,000.0)</b>	-
				-Կոմունալ ծառայություններ	4213	(53,000.0)	(53,000.0)	-
				<b>3. Վերակառուցման և զարգացման էկոլոգիական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>453.3</b>	<b>453.3</b>	-
				-Այլ ծախսեր	4861	453.3	453.3	-
				<b>4. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>268.0</b>	<b>268.0</b>	-
				-Այլ ծախսեր	4861	268.0	268.0	-
				<b>5. Եվրոպական միության հարևանության ներդրումային գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>3,668.9</b>	<b>3,668.9</b>	-
				-Այլ ծախսեր	4861	3,668.9	3,668.9	-
				<b>6. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>917.2</b>	<b>917.2</b>	-
				-Այլ ծախսեր	4861	917.2	917.2	-

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոսիված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<u>7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» (պատվիրակված լիազորություններ)</u>		268.0	268.0	-
				-Այլ ծախսեր	4861	268.0	268.0	-
2560	05	6	0	<b>Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>		22,000.0	22,000.0	-
				որից՝				
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		22,000.0	22,000.0	-
				այդ թվում՝				
				<u>1. Գանձ, տարածքների հիմնում և պահպանում</u>		22,000.0	22,000.0	-
				-Կոմունալ ծառայություններ	4213	8,000.0	8,000.0	-
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	14,000.0	14,000.0	-
2600	06	0	0	<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</b>		108,713.5	108,713.5	-
				այդ թվում՝				
2630	06	3	0	<b>Ջրամատակարարում</b>		107,149.6	107,149.6	-
				որից՝				
2631	06	3	1	Ջրամատակարարում		107,149.6	107,149.6	-
				այդ թվում՝				
				<u>1. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ցրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>		103,140.4	103,140.4	-
				-Այլ ծախսեր	4861	103,140.4	103,140.4	-
				<u>2. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>		1,089.7	1,089.7	-
				-Այլ ծախսեր	4861	1,089.7	1,089.7	-
				<u>3. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>		1,622.1	1,622.1	-
				-Այլ ծախսեր	4861	1,622.1	1,622.1	-
				<u>4. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>		1,127.6	1,127.6	-
				-Այլ ծախսեր	4861	1,127.6	1,127.6	-
				<u>5. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>		169.8	169.8	-
				-Այլ ծախսեր	4861	169.8	169.8	-
2640	06	4	0	<b>Փողոցների լուսավորում</b>		1,563.9	1,563.9	-
				որից՝				
2641	06	4	1	Փողոցների լուսավորում		1,563.9	1,563.9	-
				այդ թվում՝				
				<u>3. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>		241.3	241.3	-
				-Այլ ծախսեր	4861	241.3	241.3	-
				<u>4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>		518.6	518.6	-
				-Այլ ծախսեր	4861	518.6	518.6	-
				<u>5. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և քննադատական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>		804.0	804.0	-

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոսիված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				-Այլ ծախսեր	4861	804.0	804.0	-
<b>2800</b>	<b>08</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ</b>		<b>227,494.3</b>	<b>201,478.8</b>	<b>26,015.5</b>
				այդ թվում՝				
<b>2810</b>	<b>08</b>	<b>1</b>	<b>0</b>	<b>Հանգստի և սպորտի ծառայություններ</b>		<b>90,000.0</b>	<b>200,000.0</b>	<b>(110,000.0)</b>
				որից՝				
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ		90,000.0	200,000.0	(110,000.0)
				այդ թվում՝				
				<b>2. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում</b>		<b>90,000.0</b>	<b>200,000.0</b>	<b>(110,000.0)</b>
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	200,000.0	200,000.0	-
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	(110,000.0)	-	(110,000.0)
<b>2820</b>	<b>08</b>	<b>2</b>	<b>0</b>	<b>Մշակութային ծառայություններ</b>		<b>137,494.3</b>	<b>1,478.8</b>	<b>136,015.5</b>
				որից՝				
2821	08	2	2	Թանգարաններ և ցուցասրահներ		348.8	348.8	-
				այդ թվում՝				
				<b>1. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ</b>		<b>348.8</b>	<b>348.8</b>	<b>-</b>
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	348.8	348.8	-
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ		135,951.8	(63.7)	136,015.5
				այդ թվում՝				
				<b>2. Կենդանաբանական այգու գուցադրություններ</b>		<b>(63.7)</b>	<b>(63.7)</b>	<b>-</b>
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(63.7)	(63.7)	-
				<b>3. Կենդանաբանական այգու հիմնանորոգում</b>		<b>136,015.5</b>	<b>-</b>	<b>136,015.5</b>
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	136,015.5	-	136,015.5
2825	08	2	5	Արվեստ		1,193.7	1,193.7	-
				այդ թվում՝				
				<b>2. Թատերական ներկայացումներ</b>		<b>1,193.7</b>	<b>1,193.7</b>	<b>-</b>
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	1,193.7	1,193.7	-
<b>2900</b>	<b>09</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>		<b>362,088.3</b>	<b>47,088.3</b>	<b>315,000.0</b>
				այդ թվում՝				
<b>2910</b>	<b>09</b>	<b>1</b>	<b>0</b>	<b>Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն</b>		<b>(56,719.7)</b>	<b>(126,719.7)</b>	<b>70,000.0</b>
				որից՝				
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն		72,349.1	2,349.1	70,000.0
				այդ թվում՝				
				<b>2. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում</b>		<b>70,000.0</b>	<b>-</b>	<b>70,000.0</b>
				-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	70,000.0	-	70,000.0
				<b>3. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված յիստորություններ)</b>		<b>2,349.1</b>	<b>2,349.1</b>	<b>-</b>
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	2,349.1	2,349.1	-
2911	09	1	2	Տարրական ընդհանուր կրթություն (պատվիրակված յիստորություններ)		(129,068.8)	(129,068.8)	-
				այդ թվում՝				
				<b>1. Հանրակրթական ուսուցում</b>		<b>(102,661.7)</b>	<b>(102,661.7)</b>	<b>-</b>
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(102,661.7)	(102,661.7)	-
				<b>2. Հատուկ կրթություն</b>		<b>2.5</b>	<b>2.5</b>	<b>-</b>
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	2.5	2.5	-
				<b>3. Ներառական կրթություն</b>		<b>(26,409.6)</b>	<b>(26,409.6)</b>	<b>-</b>
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(26,409.6)	(26,409.6)	-
<b>2920</b>	<b>09</b>	<b>2</b>	<b>0</b>	<b>Միջնակարգ ընդհանուր կրթություն</b>		<b>(90,719.5)</b>	<b>(90,719.5)</b>	<b>-</b>
				որից՝				
2921	09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն (պատվիրակված յիստորություններ)		(77,424.7)	(77,424.7)	-
				այդ թվում՝				
				<b>1. Հանրակրթական ուսուցում</b>		<b>(61,461.7)</b>	<b>(61,461.7)</b>	<b>-</b>
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(61,461.7)	(61,461.7)	-
				<b>2. Հատուկ կրթություն</b>		<b>9,689.2</b>	<b>9,689.2</b>	<b>-</b>

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	9,689.2	9,689.2	-
				<b>3. Ներառական կրթություն</b>		<b>(20,363.9)</b>	<b>(20,363.9)</b>	-
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(20,363.9)	(20,363.9)	-
				<b>4. Երեկոյան կրթություն</b>		<b>(5,288.3)</b>	<b>(5,288.3)</b>	-
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(5,288.3)	(5,288.3)	-
2922	09	2	2	Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն (պատվիրակված յիսգորություններ)		(13,294.8)	(13,294.8)	-
				այդ թվում՝				
				<b>1. Հանրակրթական ուսուցում</b>		<b>(4,024.3)</b>	<b>(4,024.3)</b>	-
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(4,024.3)	(4,024.3)	-
				<b>2. Հատուկ կրթություն</b>		<b>(11,286.2)</b>	<b>(11,286.2)</b>	-
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(11,286.2)	(11,286.2)	-
				<b>3. Ներառական կրթություն</b>		<b>2,058.2</b>	<b>2,058.2</b>	-
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	2,058.2	2,058.2	-
				<b>4. Երեկոյան կրթություն</b>		<b>(42.5)</b>	<b>(42.5)</b>	-
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	(42.5)	(42.5)	-
2950	09	5	0	<b>Ըստ մակարդակների յոսասկարգվող կրթություն</b>		<b>258,429.6</b>	<b>13,429.6</b>	<b>245,000.0</b>
				որից՝				
2951	09	5	1	Արտադարձակական դաստիարակություն		258,429.6	13,429.6	245,000.0
				այդ թվում՝				
				<b>1. Արտադարձակական դաստիարակություն</b>		<b>3,429.6</b>	<b>3,429.6</b>	-
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	234.8	234.8	-
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	3,194.8	3,194.8	-
				<b>2. Արտադարձակական կազմակերպությունների հիմնադրոգում և վերանորոգում</b>		<b>245,000.0</b>	-	<b>245,000.0</b>
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	245,000.0	-	245,000.0
				<b>5. Արտադարձակական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում</b>		<b>10,000.0</b>	<b>10,000.0</b>	-
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	10,000.0	10,000.0	-
2960	09	6	0	<b>Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ</b>		<b>251,097.9</b>	<b>251,097.9</b>	-
				որից՝				
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ		251,097.9	251,097.9	-
				այդ թվում՝				
				<b>1. Նախադարձակական հաստատությունների հիմնադրոգում և վերանորոգում</b>		<b>250,000.0</b>	<b>250,000.0</b>	-
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	250,000.0	250,000.0	-
				<b>3. Մոցիայապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովում (պատվիրակված յիսգորություններ)</b>		<b>(13.2)</b>	<b>(13.2)</b>	-
				- Այլ բնթագիկ դրամաշնորհներ	4639	(13.2)	(13.2)	-
				<b>4. Առեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված յիսգորություններ)</b>		<b>1,111.1</b>	<b>1,111.1</b>	-
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	1,111.1	1,111.1	-
3000	10	0	0	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		<b>11,226.7</b>	<b>11,226.7</b>	-
				այդ թվում՝				
3070	10	7	0	<b>Մոցիայական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)</b>		<b>12,500.0</b>	<b>12,500.0</b>	-
				որից՝		-	-	-
3071	10	7	1	Մոցիայական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		12,500.0	12,500.0	-
				այդ թվում՝		-	-	-
				<b>5. Հասարակական կազմակերպություններին աջակցություն</b>		<b>12,500.0</b>	<b>12,500.0</b>	-
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	12,500.0	12,500.0	-

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN համված	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
3090	10	9	0	<b>Մոզիայական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>		<b>(1,273.3)</b>	<b>(1,273.3)</b>	-
				որից՝				
3091	10	9	1	Մոզիայական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		(1,273.3)	(1,273.3)	-
				այդ թվում՝				
				<b>1. Մոզիայական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված յիստորություններ)</b>		<b>(1,273.3)</b>	<b>(1,273.3)</b>	-
				-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	(667.0)	(667.0)	-
				-Էներգետիկ ծառայություններ	4212	(371.5)	(371.5)	-
				-Կոմունալ ծառայություններ	4213	(5.0)	(5.0)	-
				-Կապի ծառայություններ	4214	(209.6)	(209.6)	-
				-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	83.0	83.0	-
				-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	278.7	278.7	-
				-Տրանսպորտային նյութեր	4264	(211.0)	(211.0)	-
				-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	(170.9)	(170.9)	-
3100	11	0	0	<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ</b>		<b>2,189,861.5</b>	<b>1,705,166.7</b>	-
				այդ թվում՝				
3110	11	1	0	<b>ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ</b>		<b>2,189,861.5</b>	<b>1,705,166.7</b>	-
				որից՝				
